ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՀՀ ԳԱԱ «ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան

«3» հոկտեմբեր 2022թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Կողմ 1 կամ Պալատ**), ի դեմս նախագահ Սիմոն Ալբերտի Բաբայանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոնը» (**այսուհետ՝ Կողմ 2 կամ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ**), ի դեմս տնօրեն՝ Արմեն Սարգսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, բարձր գնահատելով Հայաստանում իրավունքի դերն ու նշանակությունը, իրավագիտակցության բարձր մակարդակ ապահովելու և մասնագիտական փորձ ու հմտություններ փոխանակելու նկատառումները, կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի շրջանակներում Պալատը և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն պատրաստակամություն են հայտնում.

Համատեղ իրականացնել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի ուսանողների՝ մագիստրանտների, /այսուհետ Պրակտիկանտ/ գիտահետազոտական կամ գիտաարտադրական պրակտիկաների կազմակերպման ծրագրերը՝ ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան:

1.1. Համատեղ կազմակերպել և իրականացնել տարբեր գործնական քննարկումներ, հանդիպումներ, կոնֆերանսներ՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի, ինչպես նաև միջազգային հարցերի լուծման վերաբերյալ, ներառելով պրակտիկա անցնող ուսանողական կազմին:

1.2. Տալ պարզաբանումներ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ, որոնք կունենան պարզաբանման և խորհրդատվության կարիք՝ կիսելով միմյանց միջև ունեցած տարիների մասնագիտական փորձը և հմտությունները:

1.3. Տեղեկատվություն հայցելու և ստանալու՝ համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին:

1.4. Տեղեկատվություն հայցելու և ստանալու՝ երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

2. Լրացուցիչ պայմաններ.

2.1. Պրակտիկան սկսվելուց առաջ Կողմ 2-ը ներկայացնում է պրակտիկանտների և մեթոդիստների ցուցակները (2 օրինակից), որոնք ներառում են սույն հուշագրի առաջին մասով նախատեսված աշխատանքների իրականացումը:

3. Եզրափակիչ և անցումային դրույթներ.

3.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

3.2. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրությամբ:

3.4. Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասարազոր օրինակից:

3.5. Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

Հուշագիրը ստորագրող կողմերը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ	**ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն**
ք. Երևան, Զաքյան փողոց 7-2 շենք **Հեռախոս՝ 600 701, 600 704** **Էլ. փոստ՝ info@advocates.am**	**ք. Երևան, Բաղրամյան 24դ** **Հեռախոս՝ 568 068, 524 812** **Էլ. փոստ՝ info@sci.am**
նախագահ՝ Սիմոն Բաբայան	**տնօրեն՝ Արմեն Սարգսյան**